

Շոգովուրդ

168
(2834)

25 նոյեմբերի շաբաթ 2023
տպագրության ԺԲ տարի

Է. Երեան, Արմլուր 22ա/3 (0010)

+ 374 10 546423

info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

100 դրամ

ԻՆՉՈՒՒ Է ՊԱՍԻՎԱՑԵԼ ԱՐԱՅԻՆ ԶԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԸ



Վերջին շրջանում վարչապետի աշխատակազմի ղեկավար Արայիկ Զարուբյանյանին բնորոշ ակտիվությունը, կարծես թե, նվազել է: Նախ՝ պարոն Զարուբյանյանը կորավ քաղաքական հորիզոնից, ապա նույնիսկ ներկա չգտնվեց «Բյուջե-2024»-ի քննարկմանը: Ավելի ուշ պարզ դարձավ, որ Արայիկ Զարուբյանյանը գտնվում է արձակուրդում: Մասնավորապես սկսեցին տեղեկություններ պատվել այն մասին, որ Զարուբյանյանը մեկնել է Միացյալ Նահանգներ: Աշխատակազմի ղեկավարը վերադարձավ արձակուրդից, սակայն նրա ներկայությունը այդպես էլ չգագացվեց: Չատերը վստահաբար նաեւ մոռացել էին նրա մասին՝ կենտրոնանալով քաղաքական այլ կերպարների վրա, որոնք այդ պահի դրությամբ փաստացի ավելի ակտիվ գործունեություն են ցուցաբերում, քան երբեմնի ակտիվ Զարուբյանյանը: Նոյեմբերի 23-ին տեղի ունեցավ Բռնցքամարտի երիտասարդների աշխարհի առաջնության բացումը, որին, բացի բռնցքամարտի ֆեդերացիայի տեղական ու միջազգային ներկայացուցիչներից, ներկա էին ԿԳՄՍՆ նախարար ժաննա Անդրեասյանը, ինչը տրամաբանական է: Ներկա էր նաեւ նախարարի՝ սպորտի գծով տեղակալ Կարեն Գիլոյանը. սա եւս օրինաչափ է: Թերեւս այսքանը: 2022 թվականից ի վեր սպորտային եւ, առհասարակ, կարեւոր միջոցառումների «գլխին կանգնած» Արայիկ Զարուբյանյանը բացակայում էր: Նշենք, որ 2022 թվականի բռնցքամարտի Եվրոպայի մեծահասակների առաջնությունը (EUBC 2022), ծանրամարտի Եվրոպայի առաջնությունը (EWC 2023), բռնցքամարտի Եվրոպայի պատանիների առաջնությունը (EUBC 2023) եւ մի շարք այլ կարեւոր նախագծերի իրականացում վստահված է եղել Արայիկ Զարուբյանյանին, որն էլ լավ թե վատ միջոցներով ու ձեռքով, սակայն, ի վերջո, հավուր պատշաճի կարողացել էր կազմակերպել այնպես, որ գլխիկոր չհեռանան Զայաստան եկած հյուրերը: Այլ կերպ ասած՝ միջոցառումների կազմակերպչի ղեկավարը միշտ եղել է Զարուբյանյանը: Բռնցքամարտի երիտասարդների աշխարհի առաջնությունը, սակայն, հեղափոխիչ էր. այս անգամ, կարծես թե, կազմակերպչի ղեկավարը ժաննա Անդրեասյանն է: Դասագրքերի տապալված տպագրությամբ ու համալսարանների անվտանգային համակարգերի անտեղյակությամբ հայտնի նախարարն այսօր միջազգային միջոցառման կազմակերպիչ է: Իսկ ինչո՞ւ է ամեն բան այսպես դասավորվել՝ դեռեւս հայտնի չէ: Զավելենք, որ երկար դադարից հետո Զարուբյանյանը պաշտոնական էջում միայն նոյեմբերի 23-ին հայտնվեց աշխատակազմի ղեկավարը, այն էլ՝ Շվեյցարիայի զարգացման եւ համագործակցության գործակալության (ՇԶԳ) Զարավային Կովկասի համագործակցության տարածաշրջանային տնօրեն Բարբարա Բոենի Սլաթսի ղեկավարած պատվիրակությանը ընդունելիս եւ բավականին հյուծված տեսքով:

Ազգային ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Կարեն Զամբարձումյանը, որը մշտապես ԱԺ ծեծկռտուքների էպիկենտրոնում է հայտնվում, հայտարարագրել է 1 անշարժ գույք: Միանձնյա սեփականությամբ հողամասը գտնվում է Սյունիքի մարզի Միսիան քաղաքում, որը ձեռք է բերվել 2011 թվականին: Զամբարձումյանը որպես անշարժ գույք բնակարան կամ անհատական բնակելի տուն չի հայտարարագրել: Զարգ է, թե որտեղ է ապրում Զամբարձումյանը: Կարեն Զամբարձումյանը հեղափոխությունից հետո մի քանի ամիս զբաղեցրել է Սյունիքի մարզպետի պաշտոնը: Նրա աները Միսիանի նախկին քաղաքապետ Աղասի Զակոբջանյանն է: Զամբարձումյանը 2006-2018 թթ. ԲՀԿ անդամ է եղել, 2011 թվականից՝ «Բարգավաճ Զայաստան» կուսակցության քաղաքական խորհրդի անդամ, սակայն մարզպետի պաշտոնից ազատվելուց հետո նա հեռացավ ԲՀԿ-ից եւ արդեն «Իմ քայլ»-ի կազմում դարձավ պատգամավոր, այժմ էլ ութերորդ գումարման խորհրդարանի պատգամավոր է: Սակայն հետաքրքիր է, որ ԲՀԿ-ից լինելու եւ հենց այդ քվոտայով մարզպետ նշանակվելու փաստը ԱԺ պաշտոնական կայքում առկա նրա կենսագրությունից խնամքով թաքցված է: Նրա տարեկան եկամուտները կազմել են 7 մլն 513 հազար դրամ, որ միայն աշխատանքի վարձատրություն է ԶԶ ԱԺ աշխատակազմից: Նրա կանխիկ դրամական միջոցները կազմել են 4 մլն դրամ, բանկային հաշիվների մնացորդը կազմել է 89 դրամ: Ստացված վարկերի եւ փոխառությունների մայր գումարի մնացորդը հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 1 մլն 200 հազար դրամ: Զամբարձումյանը 2018 թվականին հայտարարագրել է 2012 թվականի արտադրության, Mercedes Benz մակնիշի մեքենա: «Ժողովուրդ» օրաթերթը նախկինում գրել էր՝ ԲՀԿ-ի քվոտայով մարզպետ դարձած, ապա ճամբարափոխ եղած Կարեն Զամբարձումյանն իրեն բավական ակտիվ է դրսևորել 2021 թվականի օգոստոսի 30-ին Ազգային ժողովում տեղի ունեցած ծեծկռտուքի ժամանակ: Տեսալուսանկարից եւ ԶԶԹ ուղարկված հարողագրությունից պարզ է դառնում, որ Կարեն Զամբարձումյանը 1 անգամ ձեռքով եւ առնվազն 2 անգամ ոտքով հարվածում է «Զայաստան» խմբակցության պատգամավոր Վահե Զակոբյանին:



«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ Քննչական կոմիտեն Երեանի քաղաքապետարանի միջադեպի քրեական գործով ուսումնասիրում է լրատվամիջոցների կողմից հրապարակված տեսալուսանկարը: Մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ տեսալուսանկարի հրապարակումից հետո կսկսի ծանուցումներ ուղարկելու գործընթացը: Ասել է թե՛ սպասվում է հարցաքննությունների տեղատարափ: Զետաքրքիր է՝ արդյոք կոմիտեն այս միջադեպով մինչեւ վերջ կգնա, ու պատասխանատվության ենթարկվողներ կլինեն, թե Զակակոռուպցիոն կոմիտեի օրինակով Ազգային ժողովում պատգամավորների ծեծկռտուքի դեպքի նման այն կկարճի: Զիջեցնենք, որ ոստիկանությունից հարողորում է ստացվել այն մասին, որ 2023 թվականի նոյեմբերի 11-ին՝ Երեանի ավագանու հերթական նիստի ժամանակ՝ ավագանու մի քանի անդամների միջեւ առաջացած տարածաշրջանային ընթացքում, փոխարարձ հարվածներ են հասցվել, որի ընթացքում, հասարակության նկատմամբ դրսևորելով անհարգալից վերաբերմունք, հնչել են հայիտյանքներ՝ այդպես խախտելով քաղաքապետարանի բնականոն աշխատանքը: Դեպքի առթիվ ԶԶ քննչական կոմիտեի ԵԶԲՎ Կենտրոնն եւ Նորը-Մարաշ վարչական շրջանների քննչական երրորդ բաժնում նախաձեռնվել է քրեական վարույթ՝ ԶԶ քրեական օրենսգրքի 297-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի (մի խումբ անձանց կողմից խուլիգանություն կատարելը) եւ 195-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետի (մի խումբ անձանց կողմից հարվածներ հասցնելը կամ բռնի այլ գործողություններ կատարելը) հատկանիշներով: Կատարվում է նախաքննություն, հանգամանքները պարզվում են:



«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Արդրեջանի սանձազերծած ագրեսիայի հետեւանքով Արցախից Զայաստան տեղափոխված պատգամավորները մտադիր են հաջորդ շաբաթ ԱԺ արտահերթ նիստ հրավիրել: Ինչպես տեղեկացանք, նիստի օրակարգը եւ անցկացման հստակ օրը դեռ որոշված չէ. քննարկումներ են ընթանում այս մասով: Մեր տեղեկություններով՝ Արցախի բոլոր խմբակցությունները նախնական տվել են իրենց համաձայնությունը՝ նիստին մասնակցության մասով: Թե ինչ արդյունք կտա Արցախի Ազգային ժողովի նիստը, ինչ զարգացումներ կլինեն առաջիկայում, ցույց կտա ժամանակը:



ԻՆՉՈՒ

ԲԵԳԼԱՐՅԱՆԸ՝ ԻՐԱՎԻՃԱՆԻ ՊԱՏՃԱՌՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի կողմից Արցախի Ադրբեյջանի մաս ճանաչելը քաղաքական է և սվել թեմատիկ, որդեգրի ազդեցիկ իրականացման «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում նման ճեպակետ է հայտնել Արցախի նախկին դեսնախարար Արսակ Բեգլարյանը:



Մեզ հետ զրույցում նա հայտարարեց, որ այս պահի դրությամբ դեռ նախադրյալներ չի տեսնում Արցախի՝ ապօրինի գերեզմարված նախագահների և պաշտոնյաների վերադարձի համար:

«Պարոն Բեգլարյան, Արցախը փաստացի տարիներ շարունակ պայքարից հետո հայտնվեց մի իրավիճակում, երբ այն ամբողջությամբ հայաթափված է: Ըստ էության, պատմության մեջ առաջին անգամ է սա տեղի ունենում: Ինչո՞ւ հասանք այս իրավիճակին: Ի՞նչ կատարվեց: Ի՞նչ խնդիրներն ասում են, որ Արցախում տեղի ունեցող վերջին օրերին քաղաքական իրադարձությունները հանգեցրին այս ամենին՝ նկատի ունենալով նախագահական ընտրությունները: Ընդհանրապես էլ, հակառակը, ի՞նչ խնդիրների ուղղությամբ են պարզում իրենց սլոգանները: Ի՞նչ կատարվեց, ի վերջո?»

«Մի շատ մեծ հետազոտության եմ բազմահատոր գրքի չափի հարց եմ տալիս: Ես բավարար տվյալներ չունեմ այդ հարցին պատասխանելու համար, բայց ընդհանուր պատկերն առկա է: Ընդհանուր պատկերը սա է. աշխարհաքաղաքական միջավայրը դրան հանգեցրեց, որը օբյեկտիվ արտաքին գործոնների համակարգն է. այսպես ասած, դա Ռուսաստան-Արևմուտք հակամարտությունն է, միջազգային իրավակարգի առկա փլուզումն է, Ադրբեյջանի և Թուրքիայի ուժեղացումն


է տարածքում ռազմաքաղաքական առումով, բայց եթե խոսենք այն գործոնների մասին, որոնք կախյալ փոփոխական են, այլ կերպ ասված՝ մեր ազդեցության տակ գտնվող փոփոխականներ են, դրանց մեջ գլխավոր ռազմավարական նշանակության գործոնը եղել է Հայաստանի Հանրապետության կողմից Արցախը Ադրբեյջանի կազմի մեջ ճանաչելը: Սա քարտ բլանշ է տվել Ադրբեյջանի իշխանություններին, ներքին հարց դիտարկել, հարձակվել, ձերբազատվել Հայաստանի Հանրապետության դիմադրության դիսկրետից, և նաև միջազգային

հանրության համար արդեն հստակ հիմք է եղել, որ ասեն, այո, Ադրբեյջանի ներքին հարցն է, իրենք պետք է որոշեն, այնինչ մինչև այդ պահը Հայաստանի Հանրապետությունը՝ որպես հիմնական սուբյեկտ, Արցախի ժողովրդի անունից խոսելու, իրավունքներն ու շահերը պաշտպանելու, և երբ Հայաստանի Հանրապետությունը այդ սուբյեկտի դերից հրաժարվեց, արդյունքում ստացվեց, որ Արցախի իշխանությունները այն չէին կարող լրացնել, որովհետև բավական ռեսուրսներ մենք չենք ունեցել:

Ջրույցը ԲԻՒՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ



ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ԵՆ ՏՐԱՄԱԳՐԵԼ



Փոխվարչապետ Մեր Գրիգորյանը երեկ Մոսկվայում մասնակցել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի հերթական նիստին, որի ընթացքում որոշվել է սակագնային արտոնություն տրամադրել 2024 և 2025 թվականների ընթացքում Հայաստան ներմուծվող էլեկտրական շարժիչով տրանսպորտային միջոցների համար: Հայաստանի համար քվոտան սահմանվել է տարեկան ութ հազար տրանսպորտային միջոց:

ԱՄՓՈՓԻՉ ԺՈՂՈՎ ԿՈՒՆԵՆԱՆ



Իշխող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության քաղաքական ամփոփիչ ժողովը տեղի կունենա դեկտեմբերի 15-ին և 16-ին Գյումրիում:

Այս մասին «Ժողովուրդ» օրաթերթին հայտնեց ԲԳ կուսակցության աշխատակազմի ղեկավար Արուսյակ Մանավազյանը:

Ավելի վաղ «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ ԲԳ-ն դեկտեմբերին 3-րդ ամփոփիչ քաղաքական ժողովն է անելու՝ Նիկոլ Փաշինյանի գլխավորությամբ:

Այս օրերին ԲԳ-ում նախապատրաստական աշխատանքներ են ընթանում. քննարկվում են քաղաքական ժողովի անցկացման օրվա, տեղի և օրակարգի հետ կապված հարցեր:

Նշենք, որ կուսակցության քաղաքական ժողովին մասնակցում են կուսակցության վարչության անդամները, կառավարության անդամները՝ նախարարներ, փոխվարչապետներ, ԱԺ նախագահը, նրա տեղակալները, հանձնաժողովի նախագահները, տարածքային կազմակերպությունների ղեկավարներ և համայնքի ղեկավարներ, ինչպես նաև հրավիրյալ անձինք, որոնց կորոշի վարչությունը:

ԱՐԶԱԳԱՆՔ

ԱԴԻԲԵՋԱՆՆ ՈՒ «ԽԱՂԱԳՈՒԹՅԱՆ ԽԱՉՄԵՐՈՒԿԸ»

Հայաստանի ներկայացրած «Խաղաղության խաչմերուկ» նախագծի առնչությամբ Ադրբեյջանի առաջին արձագանքն այն է, որ իրենք, կարծես, այլևս հետաքրքրված չեն այդ նախագծով, որովհետև հաղորդակցությունների բացման նախագիծն իրականացնում են Իրանի հետ:



«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ այս մասին ասաց Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանն ուղիղ եթերում պատասխանելով քաղաքացու տեսահարցին, թե ինչ երաշխիքներ կան, որ «Խաղաղության խաչմերուկ» նախագիծը կյանքի կոչվելու դեպքում մաքսային և սահմանային վերահսկողությունը հենց Հայաստանի սահմանապահների ու մաքսայինների կողմից է իրականացվելու:

Փաշինյանն ընդգծեց, որ «Խաղաղության խաչմերուկ» նախագծի սկզբունքներից մեկը հետեյալն է՝ յուրաքանչյուր երկիր իր պետական ինստիտուտների միջոցով իր տարածքում իրականացնում է սահմանային մաքսային հսկողություն և ապահովում է անվտանգություն:

«Սա է այն առաջարկը, որ մենք անում ենք մեր միջազգային գործընկերներին, այդ թվում՝ Ադրբեյջանին, Թուրքիային, Իրանին, Վրաստանին: Եվ Ադրբեյջանի առաջին արձագանքը հետեյալն է, որ իրենք, կարծես, այլևս հետաքրքրված չեն այդ նախագծով, որովհետև իրենք կոմունիկացիաների այդ նախագիծն իրականացնում են Իրանի Իսլամական Հանրապետության հետ: Մենք բացարձակապես

դեմ չենք, բայց մեր առաջարկը դա է: Մեր առաջարկը ընդունելու դեպքում այդ նախագիծը կիրականացվի», - ասաց վարչապետը:

Նա ընդգծեց ևս մեկ կետի մասին, որ փոխադարձության հիման վրա՝ ընթացակարգերի պարզեցումներ կարող են տեղի ունենալ: Այդ պարզեցումները պետք է լինեն նախագծին մասնակցող բոլոր երկրների համար և բոլոր երկրների տարածքում:

Անդրադառնալով քաղաքացու դիտարկմանը, մտահոգությանը, որ «Զվարթնոց» օդանավակայանում առկա են ռուս սահմանապահներ՝ վարչապետն ասաց, որ դա ուրիշ դեպք է, ունի նախապատմություն: «Բայց նաև մեր քաղաքականությունը հետեյալն է՝ Հայաստանի ինքնիշխանության մակարդակը նաև ինստիտուցիոնալ առումով գնալով պետք է ավելանա: Եվ «Խաղաղության խաչմերուկ»-ն այդ դեպքերից է», - նշեց նա:

ԻՐԱՎԻՃԱԿ

ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ. ԱՆԿԼԱՎՆԵՐԻ ՀԱՐՑԸ ԵՂԵԼ Է

ԵԼՈՒՅԹԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևը տարված է Հայաստանով:

Բոլոր ելույթները, բոլոր հանդիպումները, բոլոր հարցազրույցները մշտապես հանգեցնում են Հայաստանի հետ վիրտուալ վեճի: Այս անգամ էլ, Բաքվում ելույթ ունենալով Կենտրոնական Ասիայի տնտեսությունների համար ՄԱԿ-ի հատուկ ծրագրի (SPECA) գագաթնաժողովում, Ադրբեջանի ղեկավարը չկարողացավ զսպել իրեն և չխոսել այդ թեմայով:

«Աշխարհում կան բազմաթիվ անհաջող, կախյալ երկրներ, որոնք ցանկանում են միաժամանակ նստել երկու կամ ավելի աթոռների վրա, ծառայել մի քանի տիրոջ և իրենց վերածել ավելի մեծ պետությունների առճակատման ասպարեզի: Դրանցից մեկն Ադրբեջանի հարեան Հայաստանն է: Նման երկրները բառի իրական իմաստով անկախ կոչել չի կարելի: Նման երկրների քաղաքականությունը հիմնված չէ իրենց ժողովրդի կամքի վրա, նրանց ճակատագիրը դրսի հովանավորների ձեռքում է: Իսկ SPECA-ի անկախ երկրներն իսկապես անկախ երկրներ են, քանի որ վարում են անկախ արտաքին և ներքին քաղաքականություն», - ասել է Ալիևը: Եվ նա շատ նմանվեց Գավրիլիսին՝ «12 աթոռի» կերպարին. «Անդունելությունից ոգեւորված Գավրիլիսը, առանց հասկանալու, թե ինչու, հանկարծ սկսեց խոսել միջազգային իրավիճակի մասին: Նա մի քանի անգամ փորձեց իր զեկույցն ուղղել տրամվայի ռելսերի երկայնքով, բայց սարսափով նկատեց, որ չի կարող դա անել: Խոսքն ինքնին, հակառակ բանախոսի կամքին, ինչ-որ տեղ միջազգային էր ստացվում»:

ՀԱՊԿ-ԻՑ ԳՈՒՐՄ ԿԳԱՆՔ

Հայաստանի իշխանությունների արձանագրումները ցույց են տալիս, որ ՀԱՊԿ-ի դե-ֆակտո գործողությունները կամ անգործությունները չեն հասցեագրում Հայաստանի Հանրապետության նկատմամբ նրա ունեցած պարտավորությունները:

«Ժողովուրդ» օրաթերթի հարցումամբ՝ այս մասին հայտարարեց ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը՝ պատասխանելով քաղաքացիներից մեկի հարցին, թե ինչու ՀԱՊԿ-ից դուրս գալու որոշում չեն կայացրել, արդյոք քաղաքական կամք չկա: Նրա խոսքով՝ քաղաքական կամք կա, եւ, ըստ անհրաժեշտության, որոշում է կայացվելու, որը կբխի Հայաստանի Հանրապետության շահերից:

«Ինչո՞ւ չենք կայացրել և կայացնելու՞ ենք արդյոք ՀԱՊԿ-ից դուրս գալու կամ ՀԱՊԿ-ում մեր անդամակցությունը դադարեցնելու վերաբերյալ որոշում: Մենք կողմնորոշվելու ենք՝ ելնելով Հայաստանի պետական շահերից: Եթե այս պահին որեւէ որոշում կայացրել կամ չենք կայացրել, մեր ուղեւիշը, որի նկատմամբ կողմնորոշվում ենք, Հայաստանի պետական շահն է: Մեր արձանագրումները ցույց են տալիս, որ ՀԱՊԿ-ի դե-ֆակտո գործողությունները կամ անգործությունները չեն հասցեագրում Հայաստանի Հանրապետության նկատմամբ նրա ունեցած պարտավորությունները: Այսինքն՝ այս իմաստով ՀԱՊԿ-ի գործողությունները համապատասխան չեն Հայաստանի շահերին: Եվ մենք այս հարցը բարձրացնում ենք թափանցիկ ձեւով», - ասաց Փաշինյանը: Նրա խոսքով՝ հայկական կողմը ցանկանում է մինչեւ վերջին հնարավորությունը անել ամեն ինչ ՀԱՊԿ-ին լիարժեք հասկանալու և իր դիրքորոշումը ՀԱՊԿ-ին հասկանալի դարձնելու համար:

«Անկլավների հարց, այո՛, կա, բայց ի՞նչ է նշանակում այդ հարցը, և որտեղի՞ց կա, և ինչո՞ւ կա», - նույնների 24-ին ուղիղ եթերում հարաբացիների սեանսարգերին դասասխանելու ժամանակ, նեց վարչապետ Նիկոլ Փաշինյանը:

«Խաղաղության պայմանագրի սկզբունքներից մեկն այն է, որ Հայաստանն ու Ադրբեջանը փոխադարձաբար ճանաչում են միմյանց տարածքային ամբողջականությունը՝ Խորհրդային Հայաստանի և Խորհրդային Ադրբեջանի տրածքների վրա, և երբ ասում ենք Հայաստանի 29 800 քվմ տարածք, դրա մեջ չեն մտնում այն էքսկլավ/անկլավները, որոնք ԽՍՀՄ ժամանակ պատկանել են Ադրբեջանին, և Հայաստանի 29 800 քվմ-ի մեջ մտնում է Արծվաշենը, որը էքսկլավ է շրջափակված Ադրբեջանի տարածքով: Այս հարցը պետք է ինչ-որ ձեւով հասցեագրվի: Եթե ես ուզեմ էլ, չեմ կարող ասել, որ նման հարց չկա: Արծվաշենը ինքնիշխան Հայաստանի տարածք է, ես չեմ կարող ուղղակի ասել՝ ՀՀ ինքնիշխան տարածքի այս կտորի հետ գործ չունենք: Երբ մենք Արծվաշենի հարցը բարձրացնում ենք, Ադրբեջանն էլ իր հերթին բարձրացնում է այն անկլավների հարցը, որը, իր բնութագրմամբ և ԽՍՀՄ քարտեզներով ու որոշումներով, դե յուրե գոյություն են ունեցել: Եթե ասենք՝ անկլավի հարց չկա, ուրեմն պետք է ասենք, որ էքսկլավի հարց էլ չկա, Արծվաշենի հարց էլ չկա, բայց երկու հարցն էլ կա: Խաղաղության գործընթացում այդ երկու հարցերը պետք է կարգավորվեն», - ասաց Փաշինյանը:

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ նա ընդգծեց, որ այս խնդրի լուծման մի քանի տարբերակ կա. «Ասենք, մենք վերահաստատում ենք մեր ինքնիշխանությունը Արծվաշենի նկատմամբ, Ադրբե-



ջանը՝ այն դե յուրե գոյություն ունեցած անկլավների նկատմամբ: Այստեղ բազմաթիվ հարցեր կան: Նախ՝ պետք է այդ էքսկլավի տարածքը գծել, վերահաստատել: Երկրորդ՝ մենք անմիջական սահման Արծվաշենի հետ չունենք, ո՞նց ենք մեր սահմանից մինչեւ Արծվաշեն տարածքն անցնելու, համապատասխանաբար Ադրբեջանն էլ՝ իր պարագայում: Այստեղ առաջանում են շատ խնդիրներ: Այստեղ կարելի է այլ լուծում գտնել, որ այն էքսկլավները, որոնք պարփակված են Հայաստանի տարածքով, սկսում են համարվել դե յուրե ՀՀ տարածք, այն տարածքները, որոնք պարփակված են Ադրբեջանի տարածքով, սկսում են համարվել Ադրբեջանի տարածք: Բայց սա արդեն կոնկրետ պայմանագրի թեմա է, որը

պետք է նաեւ ՀՀ ԱԺ-ի կողմից վավերացվի», - ընդգծեց Փաշինյանը: Հավելեց, որ վարչապետը հայտարարեց, որ բանակցություններում եղել են այդ թեմայով քննարկումներ. «Այս պահին այս թեմայով շատ կոնկրետ, առարկայական պայմանավորվածություն, համաձայնություն չկա: Եթե մենք գործողություն անելու կլինենք, դուք այդ մասին կիմանաք, մենք կքննարկենք»: Նա վստահեցրեց, որ այս խնդրի լուծման որեւէ տարբերակ չկա, որից բխող զուգահեռ լուծումները տեղում հնարավոր եւ մտածված չլինեն. «Այս հարցի շուրջ լարվածությունները շատ ավելին են, քան արժի, որ այս խնդրի վերաբերյալ լարվածություն ունենանք»:

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԸՆՏՐՎԵՑ ՆԱԽԱԳԱՀ

Գրեթե 4 տարի առաջ՝ 2019 թվականի հոկտեմբերի 17-ին, «Իմ քայլը» բարեգործական հիմնադրամի գործադիր տնօրեն, Սփյուռքի նախկին նախարար Մխիթար Հայրապետյանը ընտրվեց Երեւանի շախմատի ֆեդերացիայի նախագահ:

Երեւ արդեն Հայրապետյանը ֆեյբուքյան իր էջում հայտնել է, որ իր պաշտոնավարման ժամկետը լրացել է, և ինքն այլեւս Երեւանի շախմատի ֆեդերացիայի նախագահը չէ:

«Այսօր ավարտվեց իմ պաշտոնավարումը՝ որպէս Երեւանի շախմատի ֆեդերացիայի նախագահ: ԵՇՖ հերթական համաժողովում 31 կողմ ձայնով ֆեդերացիայի նոր նախագահ միաձայն ընտրվեց Արթուր Դավթյանը, որին մեծ հաջողություններ եմ մաղթում այս կարեւոր գործում»:

Ավելի ուշ կներկայացնեն 4-ամյա իմ պաշտոնավարման ընթացքում Երեւանի շախմատի ֆեդերացիայի գործունեության և գրանցած արդյունքների, նվաճումների վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն», - գրել է նա:

ՀՐԱՎԻՐԵԼ Է ՀԱՅԱՍՏԱՆ

Հայաստանի Հանրապետության վարչապետ Նիկոլ Փաշինյանը շնորհավորական ուղերձ է հղել Իսախան Միլեյին Ար-



գենտինայի Հանրապետության նախագահ ընտրվելու առիթով: «Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ ՀՀ վարչապետի աշխատակազմի տարածած շնորհավորական ուղերձում ասված է. «Ջերմորեն շնորհավորում եմ Արգենտինայի Հանրապետության նախագահ ընտրվելու առիթով: Լիահույս եմ, որ Ձեր պաշտոնավարման ընթացքում, հաջողությամբ հաղթահարելով բոլոր առկա մարտահրավերները, Դուք եւ Ձեր քաղաքական թիմը կկարողանաք ամրապնդել Արգենտինայի Հանրապետության դիրքերը միջազգային ասպարեզում, իսկ Արգենտինայի հայ համայնքը կշարունակի իր ավանդն ունենալ երկրի հզորացման գործում»:

Մարդու իրավունքներին, ժողովրդավարության անհավիթ հարցերում եւ ազատ տնտեսական հարաբերությունների կառուցման գործում Հայաստանը վստահելի գործընկեր է Արգենտինայի համար: Առիթը պատեհ համարելով՝ հրավիրում եմ Ձեզ պաշտոնական այց կատարել Հայաստան Ձեզ հարմար ժամկետներում: Վստահ եմ, որ մեր երկրների միջեւ ջերմ հարաբերություններն ունեն դեռեւս քաղաքացիական մեծ ներուժ: Իմ պատրաստակամությունն եմ հայտնում միասնական աշխատանքի շնորհիվ կառուցել առավել հավակնոտ օրակարգ եւ զարգացնել հարաբերություններն Արգենտինայի հետ երկկողմ հետաքրքրություններ կայացնող բոլոր ուղղություններով»:

ՈՂՐԵՐԳՈՒԹՅՈՒՆ

ՆԱՎԱՐԿՈՒԹՅՈՒՆԻՑ ԱՌԱՋ ԶԻ ՀՐԱՆԱՆԳԱՎՈՐՎԵԼ

«Ժողովուրդ» օրաթերթի սեղեկություններով շարունակվում է Ղեբեղ գետում լրագրող Արմինե ճաղարյանի մահվան դեղձի առթիվ նախաձեռնված ֆրանկան վարույթի նախաֆնդավորումը...



Ղրա հետեւանքով 2022թ. մայիսի 9-ին՝ ժամը 15:30-ի սահմաններում, Ղեբեղ գետի Քոբայր-Սանահին կայարան հատվածի 3-րդ կիլոմետրում նավարկելու ընթացքում քարին հարվածելու հետեւանքով փչոյի ռետինե նավակը շրջվել է, ու այնտեղ գտնվող Արմինե ճաղարյանն ընկել է գետը:

Չեռք բերված բավարար փաստերի հիման վրա՝ ՍՊ ընկերության տնօրենի նկատմամբ հանրային քրեական հետապնդում է հարուցվել, եւ նրան մեղադրանք է ներկայացվել՝ ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 279-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով, որը համապատասխանում է ՀՀ գործող քրեական օրենսգրքի 412-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետին (Անվտանգության պահանջներին չհամապատասխանող ապրանքներ թողարկելը կամ իրացնելը, աշխատանքներ կատարելը կամ ծառայություններ մատուցելը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ):

ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչությունում իրականացված քննչական անհրաժեշտ գործողությունների արդյունքում պարզվել են դեպքի էական հանգամանքներ, այդ թվում՝ տուժողի մահվան պատճառը:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ քննությանը տվյալներ են ձեռք բերվել, այդ թվում՝ նաեւ նշանակված փորձաքննության ստացված եզրակացությամբ, որ ռաֆտինգի ծառայությունների մատուցմամբ զբաղվող ՍՊ ընկերության տնօրենը, հանդիսանալով հրահանգավորումների անցկացման եւ մասնակիցների անվտանգությունն ապահովող պատասխանատու անձ, խախտել է «Ստանդարտացման եւ չափազիտության ազգային մարմին» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի՝ 2016 թվականի նոյեմբերի 11-ին թիվ 71-Լ հրամանով հաստատված ԳՕՍՄ 12.0.004-2015՝ «Աշխատանքի անվտանգության ուսուցում: Ընդհանուր դրույթներ» միջպետական ստանդարտի համապատասխան պահանջները:

Մասնավորապես՝ Ղեբեղ գետի վարարման ընթացքում գետի վրա կազմակերպել է ռաֆտինգի /գետով փչոյի ռետինե նավակի նավարկում/ ծառայություն, որպես ռաֆտի թիմի անդամներ՝ ներգրավել է սիրողական անձնակազմ, սահմանված կարգով չի նշանակել պատասխանատու անձ՝ հրահանգիչ:

Արմինե ճաղարյանին նավարկելուց առաջ ռաֆտինգի անվտանգության հրահանգների պահանջներին առնչվող հարցերով սահմանված կարգով գրավոր ուսուցում եւ հրահանգավորումներ չի անցկացրել, ռաֆտից օգտվելու հրահանգների պահանջների վերաբերյալ անվտանգության գծով գիտելիքների ստուգում եւ հրահանգավորում չի կատարել:

ՀԱՅՏՆԻ Է

ԿԱԼԱՆԱՎՈՐԵԼՈՒ ՈՐՈՇՈՒՄ

Արցախի նախագահի աշխատակազմի ղեկավար Կարեն Շահրամանյանին ծեծելու գործով երկու անձի կալանավորելու որոշում է կայացվել: «Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ Նարեկ Ասատրյանին եւ Արտաշես Ղահրամանյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նրանք 2023 թվականի հոկտեմբերի 20-ին՝ ժամը 15:00-ի սահմաններում, խմբի կազմում կատարել են խուլիգանություն: 2023թ. հոկտոմբերի 23-ին՝ ժամը 15:00-ի սահմաններում, մասնակցելով ք. Երեւան, Նաիրի Ջարյան 17 հասցեում գտնվող՝ Հայաստանի Հանրապետությունում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ներկայացուցչության վարչական շենքի մոտ իրականացվող հավաքին եւ տեսնելով Արցախի Հանրապետության նախագահի աշխատակազմի ղեկավար Կարեն Շահրամանյանին, քննությանը դեռուս հստակ չպարզված հարցի շուրջ վիճաբանել է վերջինիս հետ եւ քննությանը դեռուս չպարզված անձանց հետ խմբի կազմում իրավական եւ բարոյական նորմերի նկատմամբ բացահայտ արհամարական վերաբերմունք ցուցաբերելով եւ համակեցության կանոնների ցուցադրաբար անտեսմամբ հայիոյանքներ եւ անպարկեշտ արտահայտություններ հնչեցնելով, անտեսելով հասարակական կարգի ապահովման համար ծառայություն իրականացնող ՀՀ ՆԳՆ ոստիկանության ծառայողների ներկայությունը, մարդկանց անդորրը խախտելով, ինչպես նաեւ հարակից հատվածում գտնվող հասարակական նշանակության օբյեկտների բնականոն աշխատանքը խոչընդոտելով՝ կատարել է խուլիգանություն, որի ընթացքում ձեռքբերով հարվածներ է հասցրել Կարեն Շահրամանյանին:

Արտաշես Ղահրամանյանը կալանավորված է, Նարեկ Ասատրյանը տնային կալաքի տակ է, գործով նախաքննության ավարտ է հայտարարվել, եւ այն ուղարկվել է դատարան:

ԳԱՏԱՐԱՆԻ ԱՌԱՋ ԵՆ ԿԱՆԳԵԼ

Ծառայությունից խուսափողները դատարանի առաջ են կանգնել: Ռոբերտ Պետրոսյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, հաշվառված լինելով ՀՀ ՊՆ զորակոչային եւ զորահավաքային համալրման ծառայության Երեւանի թիվ 2 տարածքային ստորաբաժանումում, ենթակա է եղել զորակոչման 2022 թվականի ձմեռային զորակոչին, սակայն մինչեւ զորակոչի ավարտը չի ներկայացրել ՀՀ ՊՆ զորակոչային եւ զորահավաքային համալրման ծառայության Երեւանի թիվ 2 տարածքային ստորաբաժանում եւ խախտելով «Ջինվորական ծառայության եւ զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները՝ խուսափել է հայտարարված պարտադիր զինվորական ծառայության 2022 թվականի ձմեռային զորակոչից այդ զորակոչից տարկետում ստանալու կամ ծառայությունից ազատվելու՝ օրենսդրությամբ սահմանված հիմքերի բացակայության պայմաններում:

ՊԱՐԶՎԵՑ

ՊԱՏՎԻՐՎԱԾ ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Նոյեմբերի 18-ին սեղեկություն էր հրատարակվել այն մասին, որ Արցախի Հանրապետության ֆաղափառի կապակցում է Արցախում անչափահաս ռուսի սղանելու համար:

Shamshyan.com-ի հաղորդմամբ՝ դեպքը տեղի է ունեցել 2019 թվականի օգոստոսի 21-ին, եւ երեխայի սպանությունը նախապես պլանավորված է եղել. սպանություն կատարողը նախօրոք իմացել է՝ ում է ինչի համար է սպանելու, սակայն Արցախի իրավապահ համակարգը քննությունը կատարել է թերի, ինչն էլ թե՛ սպանվածի հարազատների, թե՛ նրան ճանաչողների մոտ արդարացիորեն զայրույթ է առաջացրել, որ ոչ միայն առանձնապես ծանր հանցագործությունն են կոծկել, այլ նաեւ, քաջ իմանալով սպանության հիմնական պատվիրատուին, չեն փորձել կամ չեն համարձակվել նրանով զբաղվել:

Նախաքննությամբ պարզվել է, որ 2019 թվականի օգոստոսի 21-ին՝ ժամը 12:00-ի

սահմաններում, ԱՀ Մարտակերտի շրջանի Վանք համայնքում տեղակայված «ԱՏՄ Վանք Լես» ՓԲ ընկերության վարչական շենքի բակում Արկարի Արկարիի Օհանյանի եւ Աբգար Նորիկի Հայրապետյանի միջեւ ծագած վիճաբանության ընթացքում Ա. Հայրապետյանը նախապես իր մոտ առկա սառը գեղեցիկ հանդիսացող ծալովի դանակով ուղղակի դիտավորությամբ, կյանքից ապօրինի զրկելու նպատակով երեք անգամ հարվածել է Ֆ. Օհանյանի մարմնի տարբեր հատվածներին՝ վերջինս պատճառելով որովայնի աջ կողային ծակած-կտրած վնասվածքի ձեւով մարմնական վնասվածք, ինչի հետեւանքով Ֆ. Օհանյանի ժամը 12:45-ին տեղափոխվել է «Արեւիկ» մանկական բուժֆիլիալում, որտեղ էլ ժամը 13:40-ին մահացել է: Նախաքննության ընթացքում հարցաքննվել են մի շարք վկաներ, նշանակվել են մի շարք փորձաքննություններ: 23.08.2019թ.-ին Աբգար Նորիկի Հայրապետյանին մեղադրանք է առաջադրվել՝ ԱՀ քրեական օրենսգրքի 103-րդ հոդվածի 1-ին մասով, եւ նրա նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը:

Վերը նշված դեպքի վերաբերյալ փաստական տվյալներ են ձեռք բերվել, որ դեպքից երեք ամիս առաջ Աբգար Հայրապետյանի հայրը մանկեկանի վրա որդուն սովորեցրել է, թե ինչպես կարելի է դանակով հարվածներ հասցնել, բացի այդ, քրեական գործի ուսումնասիրությունից երեւում է, որ քրեական գործի լրիվ օբյեկտիվ եւ բազմակողմանի քննություն չի իրականացվել, եւ վարույթն իրականացնող մարմնի կողմից ցուցաբերվել է բացահայտ անգործություն այն պայմաններում, որ ինչպես մեղադրյալի, այնպես էլ վկաների ցուցմունքներում առկա են էական հակասություններ. առկա է հիմնավոր կասկած, որ հանցագործն ունի պատվիրատու, ինչպես նաեւ այդպես էլ չի պարզվել հանցագործության շարժառիթը:

● Ըստ ոստիկանության տվյալների՝ նոյեմբերի 22-ից 23-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 67 դեպք, որոնցից 3-ը՝ նախկինում կատարված:

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՈՉ ՄԻ ՎԿԱ ՉԻ ՀԱՐՑԱՔՆՆՎԵԼ

Աժ Նախկին պատգամավոր, ԶՅՌ Գե-րագույն մարմնի նախկին անդամ Սուրեն Մանուկյանը մեկ տարի 3 ամիս կալանքի տակ է, նա մեղադրվում է Նախկին պատգամավոր, գործարար Խաչատուր Քոչըրբեյանի հորը առեւանգելու գործով:

Նա չի ընդունում իրեն առաջադրված մեղադրանքը՝ այն համարելով շինծու: Մանուկյանի պաշտպան, փաստաբան Սերգեյ Ռսկանյանից տեղեկացա, որ այդ քրեական գործով դատական նիստերը նշանակվում են մեծ ընդմիջումներով:

Ըստ փաստաբանի՝ Ս. Մանուկյանը անազատության մեջ է 2022թ. օգոստոսի 11-ից, սակայն մինչև հիմա դատարանում ոչ մի վկա չի հարցաքննվել, ոչ մի ապացույց չի հետազոտվել:

Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի դատավոր Սերժ Ռուշանյանը, չսպասելով, որ Ս. Մանուկյանի կալանքի ժամկետը լրանա, դրանից շուրջ 20 օր առաջ որոշել է Ս. Մանուկյանի կալանքը եւս 3 ամսով երկարացնել, թեւս այդ գործով նրա կալանքի ժամկետը լրանալուց 2 օր առաջ դատական նիստ էր նշանակված, կալանքը երկարաձգելու վերաբերյալ միջնորդությունը կարող էր այդ նիստում քննարկվել:

Տպավորություն կա, որ նպատակ կա Սուրեն Մանուկյանին որքան հնարավոր է երկար պահել կալանքի տակ: Մանուկյանի եւ մյուսների վերաբերյալ քրեական գործով դատական հերթական նիստը նշանակված է դեկտեմբերի 13-ին Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի Իջեւանի նստավայրում:

«Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգում այդ դատավարության մասին տեղեկություններ չկան:

ՈՉ ՀԱՄՈՋԻՉ ՊԱՏԱՄԻԱՆ

Դիվիզանի ուղորաններում բազում տեղեր քանդել են դարավանդը, խաթարել հողի արտաքին տեսքը, ռեչիեֆը, այնտեղ սննդի օբյեկտներ սարքել, տեղակայել: Շրջակա միջավայրի նախարար Զակար Սիմիդյանը մեր տեղեկատվական հարցումին պատասխանել է, որ դարավանդի քանդումը կատարվել է ոչ թե Դիվիզանի ազգային պարկի, այլ Դիվիզան համայնքի հողերում: ԶՅ ռստիկանապետ Արամ Զովհաննիսյանին տեղեկատվական հարցում ենք ուղարկել՝ նրա հարցնելով, թե ռստիկանության Դիվիզանի բաժինը ինչ է ձեռնարկել անօրինական այդ գործողությունների դեմ: Ռստիկանության Դիվիզանի բաժնի պետ Եփրեմ Գալստյանը հարցմանը պատասխանել է. «Համաձայն Դիվիզանի համայնքապետարանից ստացված գրության՝ Դիվիզանի ուղորաններում առկա են ոչ հիմնական շինություններ՝ փայտյա տնակներ, որոնք գտնվում են ոչ համայնքապատկան տարածքում: Առկա են քաղաքացի Մարինե Բադայանի 0,07486 հա եւ 0,04276 հա սեփականության հանդիսացող տարածքներ, ում սահմանված կարգով տրամադրվել է հողհարթեցման եւ բարեկարգման աշխատանքներ իրականացնելու թույլտվություն: Նշված տարածքներում ներկա պահին շինություն առկա չէ»:

Ռստիկանության Դիվիզանի բաժինը, փոխանակ խնդրի վերաբերյալ քննություն անցկացնել, բավարարվել է Դիվիզանի համայնքապետարանից ստացված գրությամբ, որտեղ դարավանդը քանդելը, հողի տեսքի ավերելը ներկայացված է որպես հողհարթեցում եւ բարեկարգում:

ՌՍԿԱՆ ՄԱՐԶԱՅՐ Տավուշ

ՎՆԱՍՆԵՐ

ՆՆԴԻԿՆԵՐԸ՝ ՎԹԱՐՆԵՐԻ ԷՊԻԿԵՆՏՐՈՆՈՒՄ

Վերջին օրջանում Հայաստանում, հիմնականում Երեւան քաղաքում, վթարների էպիկենտրոնում հնդիկ վարորդներն են: Նրանք մայքերին հիմնականում ինքնագործ մարդկանց են հարվածում եւ վնասում, հաճախ իրենց ճարդիկ վազանցների ժամանակ հայցնվում են մեքենաների դիմաց, ինչի հետեւանում էլ սեղծվում է վթարային իրավիճակ:

Բացի նրանից, որ հնդիկներն ինքնագլորներով են կաթվածահար անում երթեւեկությունը, այժմ էլ նրանք սկսել են տաքսիներ վարել եւ ակտիվ մասնակցություն ունենալ ճանապարհատրանսպորտային վթարների:

Օրերս «Ժողովուրդ» օրաթերթին դիմած քաղաքացին բողոքում էր, որ հնդիկները վարում են տաքսիներ առանց երթեւեկության կանոններին տիրապետելու: Նրանք չեն տիրապետում ճանապարհատրանսպորտային կանոններին, դրա հետեւանքով ավտովթարները եւ վթարային իրավիճակները շատանում են:

Հավելեց նաեւ, որ նրանք նույնիսկ օնլայն քարտեզներից չեն կարողանում պատշաճ օգտվել:

Նրանք, չունենալով նաեւ վարորդական վկայական, զբաղվում են ուղեւորափոխադրմամբ, ինչն էլ իր հերթին օրենքի որոշ կետերի խախտում է համարվում: Երեկ Shamshtyan.com-ը Հնդկաստանի քաղաքացու մասնակցությամբ վթար էր արձանագրել: Վթարը տեղի էր ունեցել Սարալանջի փողոցից Ազատության պողոտա ընթանալիս, երբ բախվել են Mercedes եւ Opel մակնիշի մեքենաները:



Ըստ նախնական տեղեկությունների՝ վթարի մեղավորը եղել է Opel-ի վարորդը, որը Հնդկաստանի քաղաքացի է եղել: Նա Ազատության պողոտայով ընթանալիս է եղել դեպի Բաբայան փողոց եւ դուրս է եկել հանդիպակաց երթեւեկի գոտի, բախվել Mercedes մակնիշի մեքենային: Վթարի հետեւանքով տուժել էր անչափահաս երեխա:

«Ժողովուրդ» օրաթերթը գրուցել է ԶՅ ռստիկանության ՋԼՄ-ների հետ կապի, լրատվության եւ վերլուծության բաժնի պետ Զարգանդ Գաբրիելյանի հետ, որը

փոխանցեց, որ Հայաստանում վարորդական վկայական ստանալու համար նախատեսված քննությունը լեզվական առումով ճկուն է, այսինքն՝ հնդիկները, նաեւ օտարերկրացիները շատ հեշտ կարող են քննություն հանձնել:

«Ժողովուրդ» օրաթերթը դիմել է ՆԳՆ-ին, որ տրամադրեն վիճակագրություն հնդիկների մասնակցությամբ վթարների մասին, որին կանդաղառնանք վիճակագրությունը ստանալուն պես:

ՀԱՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՀԱՅՏՆԵՑ

ԲԱՐԵՓՈՒՄՆԵՐ՝ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ

Հայաստանի զինված ուժերում հսկայածավալ բարեփոխումներ են տեղի ունենում, ղեկավարները գնացել է առեսափորման միջոցով զինվորականների աշխատավարձերը բարձրացնելու ճանապարհով, քանի որ չի ցանկանում «փակ աչքերով» աշխատավարձ բարձրացնել:

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ այս մասին ասաց Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը՝ ուղիղ եթերում պատասխանելով քաղաքացու հարցին, թե ինչու բանակում չի կիրառվում զարգացած երկրների մոդելը, ինչպիսին է, օրինակ, Շվեյցարիան:

«Հայաստանի Հանրապետությունում բանակում ձինված ուժերում, հսկայածավալ բարեփոխումներ են տեղի ունենում: Բարեփոխումներն, այդ թվում, տեղի են ունենում միջազգային փորձն ուսումնասիրելով», - ասաց Փաշինյանը: Վարչապետը հիշեցրեց վերջերս ներդրված 24-օրյա վարժական հավաքների մեխանիզմի մասին, որի նպատակներից մեկն ինչ-որ առումով շվեյցարական մոդելի ուղղությամբ գնալն է, երբ պահեստազորը ժամանակ առ ժամանակ կմասնակցի 24-օրյա հավաքներին՝ տիրապետելու զինվորական նվազագույն հմտությունների: Փաշինյանը նաեւ նշեց, որ ատեստավորման գործընթացով հիմա



էականորեն բարձրացնում են զինվորականների աշխատավարձը:

«Այսինքն, թե ինչու միանգամից աշխատավարձը չենք բարձրացնում, շատ պարզ պատճառով, այդ թվում՝ դառն փորձի պատճառով. ուզում ենք համոզված լինել, որ այն զինվորականները, որոնց ուսերին մենք դնում են պետության անվտանգությունը պահպանելու պարտավորություն, կարող են իրենց ուսերին կրել այդ բեռը: Մենք չենք ուզում փակ աչքերով բարձրացնել աշխատավարձ: Մենք ուզում ենք, որ նաեւ հանրու-

թյունը համոզված լինի, որ եթե պետությունն ինչ-որ մեկին վստահել է պահպանել երկրի անվտանգությունը, ապա այդ զինվորականը կարող է կրել այդ պատասխանատվությունը: Պատկերացրե՛ք՝ մենք միլիարդներ ծախսենք, 500-600 հազար դրամ աշխատավարձ տանք մի մարդու, որը չգիտի զինվորական գործը, իսկ, ցավոք, մեր դառն փորձը ցույց է տալիս, որ այդպիսի դեպքեր լինում են եւ ամենեւին էլ վիճակագրական շեղման չափ քիչ չեն, որ ուշադրություն չդարձնենք», - ասաց վարչապետը:

● Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 6 ՃՏՊ. 8 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ԿՐԹԱԿԱՆ

ՈՒՄՄԱՆ ՎԱՐՁ ՉԵՆ ՎՃԱՐԻ

«Մենք Ակադեմիական քաղաքում գիտակրթական կյանք ենք ուզում ունենալ: Դրա համար մտածել ենք, որ Ակադեմիական քաղաքում պետք է լինեն բոլոր բուհերը, պետք է գոյություն ունենա մինչև 8 պետական բուհ, և այդ բոլոր բուհերը պետք է ամբողջությամբ ֆինանսավորվեն պետության կողմից»:

Նրա խոսքով՝ ապագա մոդելում վճարովի ուսուցումը չի բացառվի, բայց ՀՀ քաղաքացի ուսանողները, որոնք պատշաճ առաջադիմություն կցուցաբերեն, ուսման վարձ չեն վճարի: «Ակադեմիական քաղաքը ստեղծվելու է Երևանի 17-րդ թաղամասում՝ Արագածոտնի, Կոտայքի և Արմավիրի մարզերի հատման հատվածում: Այս պահին այնտեղ ամայի տարածք է, բացի նախագծումից, որտեղ այլ աշխատանք չի տարվում: Հաջորդ փուլով սկսվելու են շինարարական աշխատանքներ: Դրանից դուրս Ակադեմիական քաղաքի շուրջ կարելու է էական բովանդակային աշխատանք է կատարվում»,- ասաց նա:

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ Փաշինյանի խոսքով՝ ժամանակի ընթացքում բուհերը և գիտահետազոտական կենտրոնները շատ դեպքերում կտրվել են իրարից, և բարձրագույն կրթության հետազոտական բարդորիչը շատ հաճախ դուրս է մնացել, ինչը բացասական է ազդում կրթության որակի վրա և կրթության գրավչության, քանի որ ուսանողները բուհում ստացած գիտելիքները չեն կարողանում կիրառել աշխատանքում:

«Այս պատճառով ամիսներ առաջ ԿԳՄՍ նախարարությունը հայտարարություն տարածեց, որ խնդրում, կոչ է անում և հանձնարարում է բուհական և գիտահետազոտական հաստատություններին սկսել քննարկում բուհական 8 կլաստերների ձեռնարկումն ապաստակով: Մենք խնդրում, կոչ ենք անում և հանձնարարում ենք, որ բուհերը, գիտահետազոտական հաստատությունները միասին քննարկեն, թե որ բուհերը միասին և գիտահետազոտական ինստիտուտների հետ կարող են միավորվել և միասնական գործունեություն ծավալել Ակադեմիական քաղաքում»,- նշեց նա:

Ըստ կառավարության ղեկավարի՝ իրենց ընկալմամբ՝ 8 բուհերից մեկը պետք է ունենա մանկավարժական, մյուսը՝ սպայական, տեխնոլոգիական, արվեստների և այլ ուղղություններ:

Փաշինյանը նաեւ բացատրեց ակադեմիական քաղաքը ստեղծելու շարժառիթը. «Այսօր Հայաստանում ոչ մի բուհ չկա, որ իր, օրինակ, ֆիզիկական հատկանիշներով համապատասխանի միջազգային չափանիշներին, և եթե մենք միջազգային չափանիշներով հավաստագրենք մեր բուհերը, բոլորը կփակվեն անհամապատասխանության պատճառաբանությամբ»:

Ըստ նրա՝ Ակադեմիական քաղաքում ցանկանում են նաեւ միջազգային դիմորդների ներգրավել Հայաստան: Բուհերից բացի, գործելու են ավագ դպրոցներ, հանրակացարաններ. «Ակադեմիական քաղաքում ուզում ենք նաեւ ավագ դպրոցներ ունենալ: Հիմա վստահ գիտենք, որ արվեստների և սպայական ավագ դպրոց ենք ուզում ունենալ, որը ավարտածները ավելի հեշտ կընդունվեն համապատասխան համալսարաններ»:

«ԱՐԴՉԻՆԲԱՆԿ»

ՎԱՐԿ ԵՆ ՏՐԱՄԱԳՐԵԼ

Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկը (ՎՋԵԲ) և Եվրոպական Միությունը (ԵՄ) «Արդիներանկ»-ին քաղաքը են 20 մլն ԱՄՆ դոլարի չափով վարկավորում Հայաստանի միկրո, փոքր և միջին բիզնեսի ձեռնարկությունների վերավարկավորման ծրագրի շրջանակներում: Ֆինանսական փաթեթը նախատեսված է Հայաստանում աճի, մրցունակության և կանաչ ճնշումային զարգացման համար: Պայմանագիրը կնքվել է Երեւանում նոյեմբերի 24-ին:



Նույն օրը շրջանակներում և նպաստում են Արեւելյան գործընկերության (ԱԳ) տնտեսական և ներդրումային ծրագրի նպատակներին, որոնք ներառում են աջակցությունը Հայաստանում 30,000 ՓՄՁ-ներին:

Պայմանագրի ստորագրման արարողության ժամանակ ֆինանսական հաստատությունների գծով ՎՋԵԲ-ի գործադիր տնօրեն Ֆրենսիս Մալիժն իր խոսքում ասաց. «Ուրախ եմ տեղեկացնել, որ այսօրվա ստորագրմամբ «Արդիներանկ»-ը միացել է մեր ֆլեգշիպի ծրագրին, որի նպատակն է տեղական ընկերություններին ավելի «կանաչ» և ավելի մրցունակ դարձնել թե՛ տեղական և թե՛ միջազգային ասպարեզներում: Մեր ֆինանսական գործընկերոջ հետ այս համագործակցությունը մեր երկարամյա դուստրի Եվրամիության աջակցության հետ մեկտեղ թույլ է տալիս մեծացնել հայկական ընկերություններին տրամադրվող մեր աջակցությունը: Ակնկալում ենք ավելի շատ հայկական ասպարեզներ և հայկական ասպարեզակիցներ տեսնել համաշխարհային շուկայում»:

Եվրոպական հանձնաժողովի արեւելյան հարեանության և ինստիտուցիոնալ զարգացման գծով տնօրեն Լուրենս Մերեյիժը նշեց, որ Եվրամիությունը հպարտ է աջակցելու այս նոր արտոնյալ վարկային գծին, որը կկնքում են ՎՋԵԲ-ն և «Արդիներանկ»-ը: «Սա եւս մեկ անգամ փաստում է, որ Հայաստանի համար մեր տնտեսական և ներդրումային ծրագիրը գործում է»:

«ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ»

ԻՆՉՈՐԻ ԳՆԵԼ ՊԱՐՏԱՏՈՄՍ

Գումար խնայելու համար անհրաժեշտ է համադաստասխան գիտելիք և կամ, իսկ ներդնելու համար՝ ջիկեքը հավասարակշռելու և ներդրումային լավագույն գործիքներ ընտրելու հմտություն: Առանց այս ամենի, աղաքանով ծեղության, ճամփորդելու, կյանքի որակը բարձրացնելու, երեխաներին լավագույն աղաքա աղաքանովելու երազանքներն այդպես էլ երազանք կմնան:

Ինչքան և ինչպես խնայել. ամենատարածված մոտեցումների մասին

Խնայել պետք է, բայց որքան և որտեղ ներդնել: Տարբեր տարիների ինչեւ են տարբեր մասնագիտական կարծիքներ, ներկայացվել են հաշվարկներ և մոտեցումներ: Չնայած որոշ տարակարծություններին՝ մասնագետները մեծամասամբ միակարծիք են, որ յուրաքանչյուր ոք պիտի ունենա անվտանգության բարձրի՝ նվազագույնն աշխատավարձի եռամսյակի չափով, ամսական խնայողությունների չափը պիտի կազմի եկամտի 10-20 տոկոսը, խնայողություններն էլ պահվել եկամուտ ստանալու նպատակով պետք է ներդնել տարբեր գործիքներում՝ ավանդ, պարտատոմս, բաժնետոմս, ոսկի և այլն:

Ի տարբերություն ավանդի, որին որպես խնայողության եղանակ ծանոթ էինք խորհրդային տարիներից, պարտատոմսերի մասին տեղեկացվածության մակարդակը ցածր է

առաջաօր: Ոլորտը համեմատաբար երիտասարդ է, իսկ շուկան նոր է ակտիվանում:

Պարտատոմսերի մասին

Պարտատոմսը խնայողության եղանակ է՝ արժեթուղթ, որը ձեռք բերելով՝ պայմանականորեն ասած, գնորդը փոխառություն է տալիս այն թողարկողին՝ պետությանը, բանկին, ընկերությանը և պասիվ՝ արժեկտրոնային եկամուտ ստանում: Նույն գործընթացի արդյունքում թողարկողը գումար է ներգրավում ընթացիկ գործունեության կամ ընդլայնման նպատակով, իսկ ժամկետի ավարտին գնորդներին հետ վերադարձնում պարտատոմսերի արժեքն ամբողջությամբ: Տոկոսագումարը՝ արժեկտրոնը, պարտատոմսի գնորդը ստանում է որոշակի պարբերականությամբ:

Օրինակ՝ «Կոնվերս բանկ»-ի թողարկած պարտատոմսերի արժեկտրոնները վճարվում են կիսամյակային կտրվածքով: Օրերս՝ նոյեմբերի 22-ին, բանկի հաճախորդները ստացել են 233 մլն ՀՀ դրամին համարժեք գումարի չափով արժեկտրոնային եկամուտ:

Նախքան ժամկետի ավարտը պարտատոմսերի շրջանառման մասին

Որպես կանոն, տեղաբաշխումից՝ ամբողջական ծավալի վաճառքից հետո պարտատոմսերը ցուցակվում են ֆոնդային բորսայում և սկսում շրջանառվել երկրորդային շուկայում: Այնպես որ, դրանք վաճառել կամ նորերը գնել հնարավոր է հենց բորսայում:

«Արդիներանկ»-ի վարչության նախագահ Արտակ Անանյանը շնորհակալություն հայտնեց ՎՋԵԲ-ին և Եվրամիությանը արդյունավետ համագործակցության և «Արդիներանկ»-ին վստահելու համար՝ մասնավորապես նշելով. «Մեզ համար մեծ պատիվ է շարունակել համագործակցությունը Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի հետ, որն «Արդիներանկ»-ի վարչախումբի գործընկերն է: ՄՓՄՁ հատվածը չափազանց կարևոր է Հայաստանի տնտեսության զարգացման, արտահանման առաջնադասման և աշխատատեղերի ստեղծման համար: Մեր լայնամասշտաբ տարածաշրջանային ցանցի շնորհիվ այս միջոցների զգալի մասը ռազմավարական իմաստով կուղղվի շատ շրջաններում ՓՄՁ-ների ուժեղացմանը»:

«Արդիներանկ»-ի ղեկավարը հատուկ ընդգծեց Եվրամիության դերը Հայաստանում «կանաչ» վարկավորման և դրա էկոլոգիական անվտանգության աջակցման գործում: Այդ միջոցները, Ա. Անանյանի խոսքով, ունեն ռազմավարական նշանակություն «Արդիներանկ»-ի համար և կնպաստեն «կանաչ» վարկավորման ծավալների մեծացմանը ամբողջ հանրապետության տարածքում:

Հիշեցնենք, որ 1992 թ.-ին մեկնարկած իր գործունեության սկզբից ՎՋԵԲ-ն Հայաստանում ֆինանսավորել է 207 նախագիծ՝ ավելի քան 2 մլրդ եվրո գումարի չափով: ՎՋԵԲ-ի և ԵՄ-ի ֆինանսավորման ծրագիրը հանդիսանում է «ԵՄ-ն բիզնեսի համար - ՎՋԵԲ-ի վարկային գիծ» համատեղ ծրագրի մի մասը, որի համար ՎՋԵԲ-ը գործընկեր ֆինանսական հաստատությունների միջոցով ֆինանսավորում է տրամադրում ՄՓՄՁ-ներին, մինչդեռ ԵՄ-ն լրացնում է խրախուսական դրամաշնորհների և տեխնիկական աջակցության տեսքով: Այս ծրագիրը նաեւ հասանելի է Կրաստանում, Մոլդովայում և Ուկրաինայում:

«Ժողովուրդ» օրաթերթում և ArmLur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ

ԹԱՆԿՅԱՆՆ ԸՖ ԳՈՒՐՋՅԱՆԸ՝ «ՕՍԿԱՐԻ» ԹԵԿՆԱԾՈՒ

Գերասան եւ ռեժիսոր Մայքլ Գուրջյանը «Օսկարի» հայաստանյան հավակնորդ «Ամերիկացի» ֆիլմի սցենարը գրելուց անմիջապես հետո դիմել է System of a Down խմբի մենակապարտեր Թանկյանին:

«Գրեմսի»-ի մրցանակակիր երաժիշտը եւ քաղաքական ակտիվիստն այնուհետեւ ֆիլմի գործադիր պրոդյուսերն է դարձել: Այնտեղ օգտագործված է Չապլինի հեղինակական կերպարը՝ պատկերելու հայկական սփյուռքի՝ իր արմատներին կապվելու երազանքը: Գուրջյանը, որը ֆիլմի հեղինակն ու ռեժիսորն է, մարմնավորում է Նաեի Չարլիին՝ ԱՄՆ տեղափոխված հայ գաղթականին, որը վերադառնում է խորհրդային ժամանակների իր հայրենիք եւ անմիջապես բանտարկվում, բայց իր խցից Նա տեսնում է բանտապահի տունը: Աստիճանաբար Նրա պահակի ու վերջինի կնոջ կյանքն անտրոպոլոգիայի միախառնվում է: Գուրջյանն ու Թանկյանը Variety-ի հետ զրուցել են ֆիլմի արդիականության մասին, քանի որ Հայաստանի հարաբերությունները Ռուսաստանի հետ գնալով սրվում են:

«Որպես հայ՝ ես միշտ ցանկացել եմ ինչ-որ բան անել՝ կապված իմ արմատների հետ: Նկատելով, որ ցեղասպանության վրա կենտրոնացումը մեծ է, ես ցանկացա նկարահանել մի ֆիլմ, որը թույլ կտար հայերին մի փոքր հանգստանալ, ու Նաեի մի քիչ ծիծաղելի կլիներ: Այն, որ Ստալինը հայերին առաջարկել էր հայրենադարձվել (Նա դա արեց խորհրդային շատ երկրների հետ), ես չգիտեի այդ մասին, եւ շատ հայեր առանձնապես չեն խոսում այդ թեմայով: Բայց ես մի քանի անգամ լսել եմ, որ դա նկարագրվում էր որպես «վերջ՝ վերջի վրա»: Տեղասպանությունից հետո ողջ մնացած շատ հայեր վերադարձան հայրենիք... սակայն շատերի համար դա աղետ էր: Այս պատմության մեջ հուսադրող բան գտնելը դժվար էր, ինչպես Նաեի ճիշտ մոտեցում ցուցաբերելը:



Երբ ես առաջին անգամ գրեցի սցենարը, ես 100%-ով վստահ չէի, որ այն կաշխատեր: Սա է պատճառներից մեկը, որ ես Սերժին ցույց տվեցի դրա վաղ պատճենը: Կարծում եմ, որ շատ առումներով Նա ինձ վստահություն ներշնչեց, որ այստեղ ինչ-որ բան կա եւ արժե հետամուտ լինել»,-ասում է Գուրջյանը: Թանկյանը կարծում է, որ «այժմ անհավանական ժամանակ է այս ֆիլմը թողարկելու համար՝ կապված Հայաստանի՝ դեպի Արեւմուտք ուղղված աշխարհաքաղաքական առանցքի հետ»: «Մարդիկ Նայում են Հայաստանին ու ասում՝ այ, նրանք 1920-ականների սկզբից Ռուսաստանի խորհրդային արբանյակային երկիրն էին, ինչը ճիշտ է, բայց մարդիկ չեն գիտակցում, որ ցեղասպանությունը դրա հետ մեծ կապ ունի: Ցեղասպանությունից հետո մեր հարեանությունը թուրքիստանում, Հայաստանում սով էր եւ շատ ավելին: Հայաստանը մեծ անկախություն չուներ: Մտտ երկու տարի երկիրը անկախ էր, եւ թուրքական բանակը ներխուժեց: Եղել են մարտեր: Այսպիսով, ընտրությունը ժամանակի միջոց էր, որոնք, մենք գիտեինք, որ մեզ չեն սպանելու, եւ թուրքերի միջոց, որոնք մեզ սպանում էին: Այնպես որ, 1921 թվականին Հայաստանի խորհրդայնացումը ընտրություն չէր,

եւ մարդիկ պետք է սա գիտակցեն: Խորհրդային Հայաստանի պատմությունը շարունակվեց մինչեւ 1991 թվականը, երբ երկիրը ձեռք բերեց անկախություն, իսկ Ռուսաստանը դարձավ անվտանգության երաշխավորը: Իսկ հետո՝ 2020 թվականին, ինչպես գիտենք, հարձակում եղավ Ադրբեջանի կողմից: Եվ, իհարկե, հարձակվել են Պուտինի լիակատար իմացությամբ ու համաձայնությամբ, քանի որ, առանց Նրա համաձայնության, Նման բաներ չեն կարող լինել Նրա տան բակում: Դրանից հետո ռուսական պետությունը Հայաստանին «վրաերթի ենթարկեց»: Այնպես որ, վերադառնալով այս ֆիլմին՝ սա կատարյալ շրջադարձ է, որը ցույց է տալիս, թե ինչու է Հայաստանը շարժվում դեպի Արեւմուտք»,-նշել է Թանկյանը: Հարցին, թե ինչ է նշանակում «Օսկարի» հավակնորդ ֆիլմը հայերի համար, Գուրջյանը նշում է, որ ինքը դա ազգային անվտանգության խնդիր է համարում: «Հայկական մշակույթի մասին մարդկանց գիտելիքները շատ ու շատ սահմանափակ են, եւ ոչ միայն հայերին, այլեւ ոչ հայերին հասանելի ֆիլմ ունենալն օգնում է հայերին երեւալ: Եթե Հայաստանը ստանար մրցանակը, դա բարձր բուն իմաստով կփոխեր երկրի վիճակը»:

ՍՊՈՐՏ

ՊԱՏՐԱՍ Է ԽԱՂԻՆ

Անգլիայի չեմպիոն, գավաթակիր, Չեմպիոնների լիգայի գավաթակիր, Եվրոպայի սուպերգավաթակիր «Մանչեսթեր Սիթի» եւ Նորվեգիայի հավաքականի 23-ամյա հարձակվող Էրլինգ Բրանդը կկարողանա մասնակցել Անգլիայի առաջնության 13-րդ տուրի հանդիպմանը «Լիվերպուլի» դեմ. հաղորդում է ESPN-ը:

Էրլինգ Բրանդը Նորվեգիայի հավաքականում ստացած ոտնաթաթի վնասվածքից հետո լիովին վերականգնվել է եւ լիարժեք մարզում է անցկացրել կատալոնացի Խոսեպ Գվարդիոլայի գլխավորած թիմի ընդհանուր խմբում:

«Մանչեսթեր Սիթի» - «Լիվերպուլ» հանդիպումը տեղի կունենա Նոյեմբերի 25-ին եւ կմեկնարկի Երեւանի ժամանակով 16:30-ին:

Ընթացիկ մրցաշրջանում Էրլինգ Բրանդը «Մանչեսթեր Սիթի» հետ մասնակցել է 18 հանդիպման, խփել է 17 գոլ, կատարել 4 գոլային փոխանցում:

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ Է ԱՌԱՋԱՐԿԵԼ

Գերմանիայի չեմպիոն Մյունխենի «Բավարիան» Նոր պայմանագիր է առաջարկել թիմի գերմանացի հարձակվող Թոմաս Մյուլերին: Կողմերը սկսել են բանակցությունները:

«Բավարիան» ցանկանում է երկարաժամկետ համագործակցությունը 34-ամյա ֆուտբոլիստի հետ մինչեւ 2025թ. հունիս. հաղորդում է twitter.com/NicoSchira-ն: Մյուլերի գործող պայմանագիրը նախատեսված է մինչեւ այս մրցաշրջանի ավարտը: Գերմանիայի ընթացիկ առաջնությունում Մյուլերը մասնակցել է 10 հանդիպման, խփել է 1 գոլ, կատարել 4 գոլային փոխանցում:

ԿՐԵՌԱՆԱ

ՀԱՎԱՔԱՆԿԱՆԻՑ

Աշխարհի չեմպիոն Արգենտինայի հավաքականի եւ պորտուգալական «Բենֆիկայի» 35-ամյա կիսապաշտպան Անխել Դի Մարիան կհեռանա ազգային թիմից 2024թ. Ամերիկայի գավաթից հետո:

«Ամերիկայի գավաթում վերջին անգամ կհազվեմ Արգենտինայի խաղաշապիկը: Հոգու կսկիծով հրաժեշտ կտամ իմ կարիերայում տեղի ունեցած ամենահարաշալիին», - սոցիալական ցանցերում գրել է 35-ամյա ֆուտբոլիստը:

Դի Մարիան Արգենտինայի հավաքականում Նորամուտը նշել է 2008 թվականին:

Ազգային թիմում անցկացրած 136 խաղում Նա խփել է 29 գոլ, դարձել 2021թ. Ամերիկայի գավաթակիր, 2022թ. աշխարհի չեմպիոն:

Ամերիկայի գավաթը կանցկացվի 2024թ. հունիսի 20-ից հուլիսի 14-ը:

ՊԱՏՄԵՑ

ԱՐՑՄԱՆԻՑ ԲՈՒՆԻ ՏԵՂԱՔԱՆՎԱԾԻ ՀՈՒՇԵՐԸ

«Վերջին անգամ երկար նայեցի սանն դասերի՝ ամեն մի անկյունից, համբուրեցի սանն դուռը ու դուրս եկա: 30 ժամ ճանապարհ եկանք, բայց այն հույսով էի, որ մի փոփոխություն կլինի, ու մեզ ես կուղարկեն մեք Արցախ»,- «Ժողովուրդ» օրաթերթի հեռուգրում դասնում է Արցախից բռնի տեղահանված Լորեսա Բաղդասյանը:

44-օրյա պետերազմի ժամանակ առաջին զոհերից էր տիկին Լորեսայի որդին՝ Արամը:

Սովորում էր Երեւանի օլիմպիական քոլեջում: Բավականին հաջողությունների էր հասել: Սիրում էր սպորտը:

«Արամը 2020թ. առաջին զոհերից էր. զոհվել է պայթյունից: Երբ եղավ պայթյունը, Նա ծածկել էր իր զինակից ընկերոջը՝ մի զինվորի, որի կյանքը հնարավոր եղավ փրկել: Մինչեւ հիմա այդ զինվորի հետ կապը պահում եմ, եւ երբ տեսնում եմ նրան, Արամիս եմ զգում: Արամը զոհվել է սեպտեմբերի 27-ին, բայց քանի որ մարմինը ուշ գտանք, հուղարկվելուց կատարեցինք Եռաբլուրում: 2002 թվականին մայիսի 9-ին

եւ առաջին անգամ զգացի մայրական զգացումը Արամի հետ: Նրանով սկսվեց իմ կյանքն ու նրանով շարունակվում է: Արամս միշտ կա, ամեն օր Նա ինձ հետ է, ամեն քայլափոխի Նա պահեց հայրենիքին տված իր խոստումը, գերադասեց հայրենիքի սերը, Նախընտրեց հայրենիքին ավելի ամուր գրկել, քան մորը: Արամը պահեց իր բոլոր խոստումները, բացի մեկից՝ չվերադարձավ», - պատմում է Լորեսա Բաղդասյանը:

Լորեսա Բաղդասյանն ասում է, որ հիմա միայն Նախանձում է այն հողին, որ իր փոխարեն մայրաքար որդուն գրկել է:

«Ստեփանակերտից միայն Արամիս լուսանկարներն են վերցրել եւ Արամի մի քանի իրերը: Վախենում էի, որ որդուս նկարները կվերցնեն, որովհետեւ շատերը զինվորական նկարներ էին: Հակարի կամուրջի մոտ աղբբեջանցիները մոտեցան, բացեցին կապոցը եւ, ի զարմանս ինձ, ոչինչ չարեցին: Հիմա ապրում եմ Երեւանում այն հույսով որ պիտի ետ գնամ իմ տուն: Աշխատում եմ թշնամու սոցիալականներում տեղադրված տեսանյութերը չդիտել, որովհետեւ մեծ ցավ եմ ապրում եւ դժվարանում եմ տեսնել մեր երկիրն օտարների ձեռքին:

Շատ ծանր եմ տանում, երբ գիտակցում եմ, որ թշնամին կարող է պոծել իմ եղբայրների ու այնտեղ թաղված տղաների գերեզմանները, ծանր է, երբ գիտակցում եմ, որ կան ծնողներ, մարդիկ, որոնք իրենց որդիների, հարազատի մարմինները Ստեփանակերտի Եղբայրական գերեզմանոցում են անփոփել եւ հիմա անգամ գերեզմանին այցի գնալ չեն կարող», - պատմում է մեր զրուցակիցը: Լորեսա Բաղդասյանի խոսքով՝ անհայրենիք լինելն ամենամեծ ցավն է, որը ոչնչով սփոփել ինքնաբերական չէ: «Անսպասելի էր սեպտեմբերի 19-ը: Մեկ օրում այդքան զոհ տալուց հետո հայտարարեցին, որ պետք է լքենք Արցախը: Ես անակնկալի եկա: Երբեք չեմ կարծել, որ մի դավաճան այնքան ընկած կարող է լինել, որ այդքան կյանքեր խլած հողը Նման անտարբերությամբ սկուտեղի վրա կհանձնի թշնամուն: Անհայրենիք լինելը թեւեւ ու ոտքեր կտրած լինելու նման է:

Ուզում եմ ապրել իմ հայրենիքում, թեկուզ շրջափակման, պակասության մեջ, հերթերում, անմարդկային պայմաններում, բայց Արցախում, իմ հայրենիքում լինեմ», - ասում է Լորեսա Բաղդասյանը:

● Նոյեմբերի 26-ին «Բոհեմ» թատրոնում տեղի կունենա «Թափանցիկ քաղաքի հեքիաթը» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 2000-4000 դրամ: Սկիզբը՝ ժամը 13:00-ին:



ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Խնդրում եմ ասել՝ հետագա արտահանման դարավարկային հարկերի հանրապետություն ներմուծված սրահայտային միջոցները սահմանված ժամկետում չարտահանելու դեպքում որքան տուգանք է սահմանված:

Հրաչ Միքայելյան (42 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. Հ. Միքայելյանի հարցին ի պատասխան՝ տեղեկացնում ենք, որ Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքի 199-րդ հոդվածի համաձայն՝ հետագա արտահանման պարտավորությամբ ՀՀ ներմուծված ապրանքները եւ տրանսպորտային միջոցները սահմանված ժամկետում չարտահանելը կամ հետագա ներմուծման պարտավորությամբ արտահանված ապրանքները եւ տրանսպորտային միջոցները սահմանված ժամկետում ՀՀ չներմուծելը առաջացնում է տուգանքի նշանակում խախտման օրվա դրությամբ այդ ապրանքների եւ տրանսպորտային միջոցների համար «ներմուծում ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով նախատեսված մաքսային վճարների մեծության 50 տոկոսի չափով, բայց ոչ պակաս, քան 50 հազար դրամ:

Նույն խախտումը, որը զուգորդվել է ապրանքների կամ տրանսպորտային միջոցների օտարմամբ, առաջացնում է տուգանքի նշանակում օտարված ապրանքների եւ տրանսպորտային միջոցների մաքսային արժեքի չափով:

ՀՀ պետական եկամուտների կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԳ». Նշենք, որ սահմանված ժամկետում մաքսային մարմիններին ապրանքների եւ տրանսպորտային միջոցների վերաբերյալ մաքսային հայտարարագիր չներկայացնելը, ինչպես նաեւ մաքսային հսկողություն իրականացնելու համար ապրանքների եւ տրանսպորտային միջոցների վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը չներկայացնելը, անկախ գրավոր հայտարարագիր ներկայացնելուց, առաջացնում է տուգանքի նշանակում 50,000 դրամի չափով:

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Ուզում եմ իմանալ՝ ինչո՞ւ է կարելի է ձեռք բերել կառուցվող բազմաբնակարան (սուրբաժանված) շենքում բնակարան կամ ոչ բնակելի սրահով:

Տիրուհի Հարությունյան (30 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. Քաղաքացու հարցին ի պատասխան՝ հայտնում ենք, որ կառուցվող բազմաբնակարան կամ ստորաբաժանված շենքերում բնակարան կամ ոչ բնակելի տարածք ձեռք բերելիս սեփականության իրավունքով ձեռք է բերվում հողամասի համապատասխան բաժնային մասը: (Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 224-րդ հոդված):

ՀՀ կադաստրի կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԳ». Նշենք, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 225-րդ հոդվածի համաձայն՝ բնակելի տարածության օգտագործման իրավունքը անձի՝ ուրիշի սեփականություն հանդիսացող բնակելի տարածությունում բնակվելու իրավունքն է: Հողամասի մասը կարող է օտարվել առանց նախօրոք առանձնացվելու: Դրա համար օտարման պայմանագրին, որպես դրա անբաժանելի մաս, պետք է կցված լինի հողամասի օտարող մասի հատակագիծը:

ԼՈՒՐ ԿԱՐԴ

Լուսանկարը՝ համացանցից



57կգ քաշային կարգում Հայաստանը ներկայացնող Տիգրան Մակիջյանը հաղթանակ տոնեց Հայաստանում ընթացող Բոնգքամարտի երիտասարդների աշխարհի առաջնությանը: Մարզիկը մեծ առավելություն ուներ Քաթարի ներկայացուցչի նկատմամբ եւ 3-րդ ռաունդում հաղթեց տեխնիկական նոկաուտով:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը
Բաժանորդագրվելու
համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:



Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (010 54-64-23 հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադարձնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից


«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետևյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝ (060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ



Շիրակ	-2 - 7 +3 + 5	Արարատ	+2 + 5 +10 + 13
Կոտայքի լեռներ	-3 - 7 +2 + 6	Արմավիր	+3 + 6 +11 + 13
Կոտայքի նախալեռներ	-2 + 1 +1 + 4	Վայոց ձորի լեռներ	0 + 5 0 + 2
Գեղարքունիք	0 - 5 +2 + 5	Վայոց ձորի նախալեռներ	+3 + 8 +11 + 3
Լոռի	-4 + 1 +3 + 8	Սյունիքի հովիտներ	+1 + 5 +12 + 16
Տավուշ	-1 + 3 +5 + 9	Սյունիքի նախալեռներ	0 - 4 +10 + 14
Արագածոտնի լեռներ	-2 - 6 0 + 3	ԼՂՀ	0 - 3 +3 + 7
Արագածոտնի նախալեռներ	+1 + 3 +6 + 10	Երեւան	+2 + 4 +9 + 11

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22^ա/3, հեռ՝ 010 54-64-23 Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086 տրված է 24.11.2010 Ստորագրված է տպագրության 24.11.2023

Գլխավոր խմբագիր՝ ԶՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆՂ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում խմբագրություն հանձնված նյութերը չեն գրայնաչափում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետևյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող էք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»: